**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ, ԵՐԵՎԱՆԻ Ն. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 14 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ, ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 17 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ N2 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ, ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՆԵՐ) ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՐԴԻ 27.02.2026թ. ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ**

**Հատուկ դպրոցների կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի** (այսուհետ՝ նաև Խորհուրդ) նիստին մասնակցում էին կառավարման 13 անդամներից 10-ը՝ **Հայկուհի Ադամյանը, Համեստ Փիրումյանը, Անահիտ Մուրադյանը, Իրինա Պոնոմարենկոն, Աննա Պողոսյանը, Քրիստինա Խաչատրյանը, Լուսինե Կարապետյանը, Աննա Սահրադյանը, Քրիստինե Սիմոնյանը, Մարինե Բաղդասարյանը**: Բացակայում էին կառավարման մարմնի խորհրդի 3 անդամ՝ **Սաթենիկ Վարդումյանը**, **Ելենա Հարությունյանը, Արմինե Փափազյանը**:

Խորհրդի նիստը կայացել է առկա ձևաչափով: Նախքան օրակարգային հարցերին անցնելը՝ Հ. Ադամյանը Խորհրդի քննարկմանը ներկայացրեց հերթական նիստի օրակարգի նախագիծը, որը նախապես ուղարկվել էր Խորհրդի անդամներին՝ ծանոթանալու նպատակով: Տեղի ունեցավ կարծիքների փոխանակում և քննարկում, որից հետո Խորհրդի անդամները **ԿՈՂՄ՝ 10, ԴԵՄ՝ 0 ձայների հարաբերակցությամբ** հավանություն տվեցին օրակարգին:

***ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝***

1. **Հատուկ դպրոցի 2026թ-ի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակների քննարկում** (զեկուցողներ՝ Երևանի մտ․ թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա․ Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա․ Գարեգինյան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս․Դավթյան, Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝ Հ. Առաքելյան):
2. **Հատուկ դպրոցի 2026թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի քննարկում** (զեկուցողներ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա․ Ենգիբարյան, Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի հաշվապահ՝ Ն. Նազարյան, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի վարչատնտեսական մասի

համակարգող՝ Լ. Կիրակոսյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ ՝ Ս.Դավթյան):

3. **2025թ-ի ֆինանսատնտեսական հաշվետվության ներկայացում** (զեկուցողներ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի հաշվապահ՝ Ն. Նազարյան, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող՝ Լ. Կիրակոսյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս.Դավթյան):

4. **Հատուկ դպրոցի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հաշվետության ներկայացում** (զեկուցողներ՝ Երևանի մտ. թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Գարեգինյան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյան, Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝ Հ. Առաքելյան):

5. **Հատուկ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգի ներկայացում** (զեկուցողներ՝ Երևանի մտ. թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի տնօրեն՝ Ա. Ենգիբարյան, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Ա. Բաբայան, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Գարեգինյան, Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ս. Դավթյան, Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝ Հ. Առաքելյան):

6. **Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի զարգացման ծրագրի կատարման մասին տնօրենի հաշվետվության ներկայացում** (զեկուցող՝ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Ա.Բաբայան):

7. **Այլ հարցեր**

**1-ին հարցի վերաբերյալ՝**

*Լսեցին*

1. **Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի** տնօրեն՝ Անահիտ Ենգիբարյանին

2. **Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի** տնօրեն՝ Արմինե Բաբայանին

3. **Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի** տնօրենի ժ/պ՝ Անի Գարեգինյանին

4. **Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝** Սոնա Դավթյանին

5. **Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝** Հ. Առաքելյանին

Խորհրդի համապատասխան օրակարգով Խորհրդի նիստի ընթացքում հատուկ դպրոցների տնօրենները ներկայացրեցին ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները:

*Արտահայտվեցին*

Հ. **Ադամյանը** նշեց, որ հատուկ դպրոցների 2026թ-ի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները նախապես ուղարկվել են Խորհրդի անդամներին՝ ուսումնասիրության համար և Խորհրդի անդամները հնարավորություն են ունեցել ծանոթանալ յուրաքանչյուր հաստատության ցուցակներին առանձին: Խորհրդի անդամները իրականացրեցին քննարկում և կարծիքների փոխանակում, որից հետո յուրաքանչյուր ուսումնական հաստատության համար առանձին տեղի ունեցավ բաց քվեարկություն: Արդյունքները ամփոփելուց հետո ձայները բաշխվեցին հետևյալ հարաբերությամբ՝ **ԿՈՂՄ – 10, ԴԵՄ- 0:**

*Որոշեցին*

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Խորհուրդը

**Որոշում է.**

1. Հավանություն տալ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի 2026թ-ի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:
2. Հավանություն տալ Երևանի հենաշարժական համակարգի

խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի 2026թ-ի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:

3. Հավանություն տալ Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի 2026թ-ի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:
4. Հավանություն տալ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի 2026թ-ի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:
5. Հավանություն տալ Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի 2026թ-ի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

<u>**2-րդ հարցի վերաբերյալ՝**</u>

*Լսեցին*

**1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի** տնօրեն՝ Ա. Ենգիբարյանին

**2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի** տնօրեն՝ Ա. Բաբայանին

**3. Երևանի թիվ հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների 17 հատուկ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող՝** Լ. Կիրակոսյանին

**4. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ՝** Ս. Դավթյանին

**5. Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի հաշվապահ՝** Ն. Նազարյանին

Խորհրդի համապատասխան օրակարգով Խորհրդի նիստի ընթացքում հատուկ դպրոցների տնօրենները (հաշվապահները) ներկայացրեցին ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը:

*Արտահայտվեցին*

**Հ. Ադամյանը** նշեց, որ ներկայացված հատուկ դպրոցների 2026թ-ի նախահաշիվները նախապես ուղարկվել են Խորհրդի անդամներին՝ ուսումնասիրման նպատակով և Խորհրդի անդամները հնարավորություն են ունեցել ծանոթանալ

յուրաքանչյուր հաստատության նախահաշվին առանձին:

Խորհրդի անդամները իրականացրեցին քննարկում և կարծիքների փոխանակում, որից հետո յուրաքանչյուր ուսումնական հաստատության համար առանձին տեղի ունեցավ բաց քվեարկություն: Արդյունքները ամփոփելուց հետո ձայները բաշխվեցին հետևյալ հարաբերությամբ՝ **ԿՈՂՄ – 10, ԴԵՄ- 0:**

***Որոշեցին*** Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Խորհուրդը

**Որոշում է.**

1. Հավանություն տալ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի 2026թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:
2. Հավանություն տալ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի 2026թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:
3. Հավանություն տալ Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի 2026թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:
4. Հավանություն տալ Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի 2026թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:
5. Հավանություն տալ Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի 2026թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվին:
6. Սահմանված կարգի համաձայն նախահաշիվը ներկայացնել լիազորված մարմնին՝ հաստատման:
7. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

***<u>3-րդ հարցի վերաբերյալ՝</u>***

*Լսեցին* **1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի** տնօրեն՝ Ա. Ենգիբարյանին

**2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի** տնօրեն՝ Ա. Բաբայանին

**3. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող՝** Լ. Կիրակոսյանին

**4. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ**՝ Ս. Դավթյանին

**5. Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի հաշվապահ**՝ Ն. Նազարյանին

*Արտահայտվեցին*

Հ. **Ադամյանը** նշեց, որ ներկայացված ֆինանսատնտեսական հաշվետվությունները նախապես ուղարկվել են Խորհրդի անդամներին՝ ուսումնասիրման նպատակով:

Ծանոթանալով յուրաքանչյուր ուսումնական հաստատության 2025թ. ֆինանսատնտեսական հաշվետվություններին՝ Խորհուրդն իրականացրեց կարծիքների փոխանակում և քննարկում, որից հետո իրականացվեց բաց քվեարկություն: Արդյունքները ամփոփելուց հետո ձայները բաշխվեցին հետևյալ հարաբերությամբ՝ **ԿՈՂՄ – 10, ԴԵՄ- 0:**

*Որոշեցին*

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 9-րդ ենթակետով՝ Խորհուրդը

**Որոշում է.**

1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի 2025թ-ի ֆինանսատնտեսական հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի 2025թ-ի ֆինանսատնտեսական հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
3. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի 2025թ-ի ֆինանսատնտեսական հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
4. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի 2025թ-ի ֆինանսատնտեսական հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

5. Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի 2025թ-ի ֆինանսատնտեսական հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

**4-րդ հարցի վերաբերյալ՝**

*Լսեցին*

**1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի** տնօրեն՝ Ա. Ենգիբարյանին

**2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի** տնօրեն՝ Ա. Բաբայանին

**3. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ** Ա. Գարեգինյանին

**4. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տես. խանգ. ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ**՝ Ս. Դավթյանին

**5. Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ**՝ Հ. Առաքելյանին

*Արտահայտվեցին*

**Հ. Ադամյանը** նշեց, որ հատուկ դպրոցների 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները նախապես ուղարկվել են Խորհրդի անդամներին՝ ուսումնասիրման նպատակով: Նա հավելեց, որ Խորհրդի անդամները նախապես հնարավորություն են ունեցել ծանոթանալ հաշվետվություններին:

Ծանոթանալով յուրաքանչյուր ուսումնական հաստատության 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվություններին՝ Խորհուրդը իրականացրեց կարծիքների փոխանակում և քննարկում, որից հետո **Հ. Ադամյանը** առաջարկեց ներկայացված ուսումնադաստիարակչական գործունեության արդյունքները Խորհրդի որոշմամբ ընդունել ի գիտություն: Արդյունքները ամփոփելուց հետո ձայները բաշխվեցին հետևյալ հարաբերությամբ՝ **ԿՈՂՄ – 10, ԴԵՄ- 0:**

*Որոշեցին*

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-

րդ կետի 9-րդ ենթակետով՝ Խորհուրդը

**Որոշում է.**

1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
3. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
4. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
5. Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

***<u>5-րդ հարցի վերաբերյալ՝</u>***

*Լսեցին* **1. Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի** տնօրեն՝ Ա. Ենգիբարյանին

**2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի** տնօրեն՝ Ա. Բաբայանին

**3. Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ** Ա. Գարեգինյանին

**4. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տես. խանգ. ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի տնօրենի ժ/պ**՝ Ս. Դավթյանին

**5. Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի տնօրենի ժ/պ՝** Հ. Առաքելյանին

*Արտահայտվեցին*

**Հ. Ադամյանը** նշեց, որ ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության (ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 3-րդ հավելված) 48-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն դպրոցի տնօրենը ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը:

Նա ավելացրեց նաև, որ Խորհրդի անդամները հնարավորություն են ունեցել ծանոթանալ ուսումնական հաստատությունների մշակված կարգերին նախապես:

Ծանոթանալով յուրաքանչյուր ուսումնական հաստատության Ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգին՝ Խորհուրդը իրականացրեց կարծիքների փոխանակում և քննարկում, որից հետո յուրաքանչյուր ուսումնական հաստատության համար առանձին անցկացվեց բաց քվեարկություն: Արդյունքները ամփոփելուց հետո ձայները բաշխվեցին հետևյալ հարաբերությամբ՝ **ԿՈՂՄ – 10, ԴԵՄ- 0:**

*Որոշեցին*

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 10-րդ ենթակետով և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով՝ Խորհուրդը

**Որոշում է.**

1. Հաստատել Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը:
2. Հաստատել Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը:
3. Հաստատել Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների 14 հատուկ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի

կարգը:

4. Հաստատել Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը:
5. Հաստատել Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

**_6-րդ հարցի վերաբերյալ՝_**

***Լսեցին*** Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն՝ Արմինե Բաբայանին, ով ներկայացրեց կրթահամալիրի զարգացման ծրագրի շրջանակներում 2025 թ. հունվարից մինչև 2026 թ. հունվար ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքները: Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բազմաթիվ կրթական, մշակութային և սոցիալական միջոցառումներ ու ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների կրթական և սոցիալական ներառվածության ապահովմանը:

Տնօրենը ներկայացրեց, որ 2025 թվականին, Հանրակրթության պետական չափորոշչի հիման վրա, կրթահամալիրի կողմից մշակվել և ներդրվել են երկու ուսումնական ծրագիր՝ «Ժեստերի լեզու» և «Ես և ինձ շրջապատող աշխարհը» առարկաների համար: Նշվեց նաև, որ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով մեկնարկել է համագործակցությունը «Կորիզ» կրթական ծրագրի, ինչպես նաև ISSD հասարակական կազմակերպության հետ՝ «Էկո դպրոց» ծրագրի շրջանակներում, և շարունակվել է ակտիվ համագործակցությունը «Դասարան + դասական» կրթամշակութային ծրագրի և «Աշխարհացույց» կրթական հարթակի հետ:

Տնօրենը հավելեց, որ նախորդ տարվա ընթացքում կրթահամալիրի սովորողները ակտիվորեն մասնակցել են տարբեր միջոցառումների, մրցույթների և փառատոների՝ արձանագրելով նաև հաջողություններ և հաղթանակներ, ինչը նպաստել է նրանց ինքնավստահության, հաղորդակցման հմտությունների և սոցիալական ակտիվության զարգացմանը:

***Արտահայտվեցին*** **Հ. Ադամյանը** նշեց, որ հաշվետվությունը նախապես ուղարկվել

էր Խորհրդի անդամներին: Այնուհետև տեղի ունեցավ կարծիքների փոխանակում և քննարկում, որից հետո առաջարկվեց բաց քվեարկությամբ հավանություն տալ զարգացման ծրագրում տեղի ունեցող փոփոխություններին: Արդյունքները ամփոփելուց հետո ձայները բաշխվեցին հետևյալ հարաբերությամբ՝ **ԿՈՂՄ – 10, ԴԵՄ՝ 0:**

***Որոշեցին*** Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 9-րդ ենթակետով՝ Խորհուրդը

**Որոշում է.**

1. Հավանություն տալ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

***Այլ հարցեր*** Խորհրդի անդամները քննարկեցին Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթահամալիրի (ԼԽՈՒԵ կրթահամալիր) կարգավիճակի փոփոխության հարցը:
Նշվեց, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2026 թվականի փետրվար ամսից կրթահամալիրը վերանվանվել է ԼԽՈՒԵ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի: Այս կապակցությամբ կարևորվեց հաստատության կողմից նոր կարգավիճակին համապատասխան կանոնադրության մշակման և անհրաժեշտ ներքին փաստաթղթերի վերանայման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:
Խորհրդի անդամները կարևորեցին գործընթացի կազմակերպված և փուլային իրականացումը՝ հաշվի առնելով վերակազմակերպման շրջանակում առաջացող կազմակերպական և բովանդակային փոփոխությունները: Առաջարկվեց գործընթացում ապահովել նաև շահառու խմբերի՝ մասնավորապես ծնողների և մանկավարժական անձնակազմի իրազեկումը:
Այնուհետև քննարկվեց Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիրի քոլեջի գործունեության կառավարման և վերահսկողության առանձնահատկությունների հարցը: Նշվեց, որ գործող կոլեգիալ կառավարման մարմնի խորհուրդը

հիմնականում մասնագիտացված է հանրակրթական բաղադրիչի հարցերում: Այդ առումով նպատակահարմար համարվեց ուսումնասիրել քոլեջի կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունները, մասնավորապես՝ քոլեջի գործունեությանն առնչվող հարցերի քննարկման համար առանձին խորհրդի ձևավորման հնարավորությունը:

Սպառելով օրակարգը՝ հատուկ դպրոցների **կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի 2026 թվականի թիվ 1 նիստն** ավարտեց աշխատանքը:

| | |
|---|---|
| **Կառավարման խորհրդի նախագահ՝** | Հայկուհի Ադամյան |
| **Նիստի քարտուղար՝** | Համեստ Փիրումյան |
| **Կառավարման խորհրդի անդամներ՝** | Անահիտ Մուրադյան |
| | Քրիստինա Խաչատրյան |
| | Իրինա Պոնոմարենկո |
| | Լուսինե Կարապետյան |
| | Աննա Պողոսյան |
| | Աննա Սահրադյան |
| | Քրիստինե Սիմոնյան |
| | Մարինե Բաղդասարյան |

02.03.2026թ.